

ԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Դավիթ Աղաջանյան
տ.գ.թ., դոցենտ, ՄՄՀ
Արցախ

Անոտացիա: *Զբոսաշրջությունը հանդիսանում է Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային ոլորտներից մեկը: Ուստի առաջիկա տարիների համար ԼՂՀ զբոսաշրջության ոլորտի զարգացման հիմնական նպատակը կհանդիսանա Արցախում արդյունավետ և մրցունակ զբոսաշրջային արդյունքի ստեղծումն ու միջազգային զբոսաշրջային շուկա արտահանումն: Զբոսաշրջության ոլորտի զարգացման միջոցով կխթանվի Արցախի համայնքներում սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի զարգացումը, կշարունակվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային երթուղիներում և փաթեթներում ընդգրկելու գործընթացը:*

Բանալի բառեր. *Միջազգային և ԼՂՀ զբոսաշրջություն, տնտեսություն, համախառն ներքին և ազգային արդյունք, հյուրանոցային տնտեսություն, զբոսաշրջային ցուցահանդեսներ, զբոսաշրջային ինդուստրիա, զբոսաշրջային արդյունք:*

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության ամենաշարժուն և շահութաբեր ոլորտներից է, որի զարգացման արագ տեմպերը և արտաբերված ավելի քան քառասուն տոկոսով մեծ հնարավորությունները նպաստավոր պայմաններ են ստեղծում տվյալ երկրի տնտեսության առանձին ոլորտների, մասնավորապես, զբոսաշրջային ինդուստրիայի ձևավորման ու զարգացման համար: Այն յուրահատուկ տեղ է զբաղեցնում ոչ միայն առանձին երկրների տնտեսություններում, այլև միջազգային տնտեսական հարաբերություններում [1, էջ 2]:

Ներկայումս համաշխարհային տնտեսական զարգացման մեջ զբոսաշրջության ոլորտին բաժին է ընկնում համախառն ազգային արդյունքի 6 տոկոսը, համախառն ներդրումների 7 տոկոսը, համաշխարհային սպառողական ծախսերի 11 տոկոսը, հարկային մուտքերի 5 տոկոսը և յուրաքանչյուր 10-րդ աշխատանքային տեղը [7, էջ 1]:

Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ ԶՀԿ) կանխատեսումների՝ 2020 թվականին համաշխարհային եկամուտները զբոսաշրջությունից կկազմեն երկու տրիլիոն դոլար: Զբոսաշրջային այցելությունների թվին զուգահեռ աճում են նաև դրանից ստացվող եկամուտները՝ գերազանցելով այլ ապրանքների և ծառայությունների արտահանումից ստացվող եկամուտները:

Արցախն ունի զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ նախադրյալներ՝ հարուստ բնաշխարհ, պատմամշակութային ժառանգություն, հետաքրքիր ավանդույթներ և հյուրասեր բնակչություն: Վերջին 10 տարվա ընթացքում ԱՀ-ի զբոսաշրջության ոլորտում գրանցվել են զարգացման զգալի տեմպեր: Ներկայումս զբոսաշրջությունը Արցախի համար հանդիսանում է սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային ոլորտներից մեկը:

Նշենք, որ Արցախի զբոսաշրջության զարգացմանն ուղղված աշխատանքների կատարման համար հիմք են հանդիսացել «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ԱՀ օրենքը, ինչպես նաև ԱՀ զբոսաշրջության զարգացման ամենամյա պետական ծրագրերը:

Վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության իրականացման շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են եղել համաշխարհային շուկայում Արցախի Հանրապետության՝ որպես զբոսաշրջության համար

բարենպաստ և գրավիչ երկրի ճանաչմանը: Մարքեթինգային քաղաքականությունը հիմնականում իրականացվել է երեք ուղղությամբ՝ համացանցի միջոցով (թվային), ԱՀ զբոսաշրջային արդյունքը միջազգային հեղինակավոր տուրիստական ցուցահանդեսներում ներկայացմամբ և բազմալեզու տպագիր տեղեկատվական գրականության հրատարակմամբ ու տարածմամբ:

Միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում և տոնավաճառներում Արցախի զբոսաշրջության արդյունքը ներկայացվել է առանձին յուրահետադարձ ազգային տաղավարով: Այդ ցուցահանդեսներում անվճար տարածվել են Արցախի զբոսաշրջային թեմատիկայով պատրաստված և տպագրված մի շարք գովազդատեղեկատվական նյութեր (գովազդային պայուսակներ, բրոշյուրներ, լիֆլետներ, քարտեզներ և այլն):

Նշենք, որ 2015 թվականին ԱՀ զբոսաշրջային ներուժը ներկայացվել է Երևան քաղաքում՝ «Ինտուր Էքսպո 2015» զբոսաշրջային ցուցահանդեսին, «Արտադրված է Հայաստանում» ցուցահանդեսին, Դիլիջանում կայացած «Զբոսաշրջությունը համախմբում է մշակույթները» ցուցահանդես-փառատոնին, Երևանում կայացած «Երկրները մեկ հարկի տակ» ցուցահանդես – ֆորումին և «Արենի» գինու փառատոնին:

«Կարաբախի ինֆորմեյշն» (Karabakh Information) չորս տեղեկատվական կենտրոնները 2015-2016 թվականների ընթացքում սպասարկել են հազարավոր զբոսաշրջիկների՝ նրանց տրամադրելով հավաստի և անվճար տեղեկություններ երկրի զբոսաշրջային ենթակառուցվածքների և այլ ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև այցելուներին աջակցություն են ցուցաբերել իրենց հանգիստը Արցախի Հանրապետությունում կազմակերպելու համար:

Արցախի զբոսաշրջության ոլորտի զարգացման գործում մեծապես նաև կարևորվում են իրականացվող քարոզչական աշխատանքները: Զբոսաշրջային ներուժի քարոզչության նպատակով Արցախի Հանրապետության զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է չորս հեղինակավոր միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում՝ Մադրիդում, Փարիզում, Ռիմինիում և Լոնդոնում, որոնց մեջ ներգրավված զբոսաշրջային ընկերությունների ընդհանուր թիվը կազմել է 17 696, իսկ այցելուների թվաքանակը՝ 290 000 մարդ, ինչը լուրջ խթան է հանդիսանում Արցախ այցելող օտարերկրյա զբոսաշրջիկների թվի աճի և ընդհանուր զբոսաշրջության զարգացման համար:

Ամբողջությամբ ձևավոխվել և առավել արդիական է դարձել ԱՀ զբոսաշրջային պաշտոնական կայքէջը (www.karabakh.travel): Կատարվել է կայքէջի դիզայնի վերամշակում և ադապտացում: Հայերեն, անգլերեն և ռուսերեն տարբերակներին ավելացվել են կայքէջի արաբերեն, գերմաներեն և իսպաներեն լեզուները: 2015-2016 թվականների ընթացքում կատարվել է կայքէջի մշտական թարմացում և տարածում:

Ստեղծվել է DestinationArtsakh.com զբոսաշրջային բլոգը՝ ուղղված համացանցի անգլիախոս լսարանին:

Արցախի մասին 3 լեզուներով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) նկարահանվել են նաև 15 ռուպեանոց ֆիլմեր՝ «Հունոտի կիրճ» պետական բնապատմական արգելոց, «Տիգրանակերտ» պետական պատմամշակութային արգելոց, «Նիկոլ Դումանի տուն-թանգարան և ազգագրական թաղամաս»[9]:

Հարավային զբոսաշրջային երթուղու զարգացման ծրագրի շրջանակներում ներգնա զբոսաշրջությունը խթանելու և տեղի բնակչությանը լրացուցիչ եկամուտներ ապահովելու, ինչպես նաև փառատոների միջոցով համայնքների սոցիալ-տնտեսական կյանքն զարգացնելու նպատակով 2015-2016 թվականների հունիսին Ամարաս վանքի շրջակայքում կազմակերպվել է «Թթի» փառատոն, իսկ հոկտեմբերին Արցախի Հանրապետության Հաղորթի շրջանի Տող գյուղում կազմակերպվել և անց է կացվել «Արցախյան գինու» փառատոնը:

Երկրի քաղաքացիների և զբոսաշրջիկների համար հանգստի և ժամանցի հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով իրականացվել են Շահումյանի շրջանի «Տաք ջուր» զբոսաշրջավայրի բարեկարգման աշխատանքները, որոնք այցելուների համար անհրաժեշտ նվազագույն ծառայությունների մատուցման հնարավորություն կստեղծեն:

Արցախ այցելող զբոսաշրջիկների թվաքանակի ավելացման և կայուն աճի ապահովման համար շարունակվել է սերտ համագործակցությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի զարգացման հիմնադրամի, «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի և ՀՀ տուրօպերատորների հետ՝ համատեղ ծրագրերի իրականացման և այդ ծրագրերում Արցախի Հանրապետության ընդգրկման ուղղությամբ:

Շնորհիվ վերջին տարիների ընթացքում զբոսաշրջության ոլորտում տարվող նպատակային պետական քաղաքականության, ինչպես նաև շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության համագործակցության՝ զբոսաշրջությունը Արցախի Հանրապետությունում արձանագրում է կայուն զարգացում:

ԱՀ կառավարության կողմից ընդունված զբոսաշրջության զարգացման ծրագրերի շջանակներում իրականացված միջոցառումները տարեցտարի նպաստում են Արցախի տնտեսության կայուն զարգացմանը: Ավելացել է ֆինանսական միջոցների ներհոսքը հանրապետություն և համապատասխանաբար պետական բյուջե, խթանվել միջազգային զբոսաշրջային շուկաներում Արցախի Հանրապետության ինտեգրման գործընթացը:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ Արցախի Հանրապետության տարածքում գործում են 43 հյուրանոցային տնտեսության օբյեկտ՝ 1422 ննջատեղով: Ի համեմատ 2012թ. ԱՀ-ում գործող հյուրանոցների թիվը աճել է 1.4 անգամ (2012թ. ընդամենը 30 հյուրանոց):


2015 թվականից իրականացվում է զբոսաշրջային օպերատորների և զբոսաշրջային գործակալների պարտադիր հաշվառում: Նշված ժամանակահատվածում լիազոր մարմնի կողմից հաշվառվել են չորս զբոսաշրջային տուրօպերատոր և մեկ զբոսաշրջային գործակալ, չորս զբոսավարի տրամադրվել է լիցենզիա:

Ըստ ԱՀ արտաքին գործերի նախարարության տվյալների՝ 2015 թվականին արձանագրվել է Արցախ այցելած միջազգային զբոսաշրջիկների թվաքանակի 13 տոկոս աճ: Մոնիթորինգի արդյունքում ի հայտ է եկել Հայաստանի Հանրապետությունից ԱՀ այցելող զբոսաշրջիկների թվաքանակի էական աճ: Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում դեպի Արցախի Հանրապետություն իրացվել են ավելի քան 1000 զբոսաշրջային փաթեթներ:

Համաձայն ԱՀ վիճակագրական տվյալների՝ Արցախ ժամանած զբոսաշրջիկների առավելագույն թվաքանակը արձանագրվել է 2015թ. շուրջ 16.6 հազ.մարդ (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Արցախ ժամանած զբոսաշրջիկների թվաքանակը [10]




Ըստ Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության տվյալների՝ 2015 թվականին Արցախում արձանագրվել է հանրապետություն այցելած միջազգային զբոսաշրջիկների թվաքանակի 15.4 տոկոս աճ 2014 թվականի համեմատությամբ:

2016 թվականին Արցախ այցելել են միայն 13961 զբոսաշրջիկ: Վերջինիս թվաքանակի նվազումը կապված է Ապրիլյան քառօրյա պատերազմով, որը բացասական ազդեցություն է ունեցել Արցախի տնտեսության վրա, այդ թվում՝ նաև զբոսաշրջության ոլորտի վրա: Զբոսաշրջության ոլորտում անկումը կազմել է շուրջ 16 տոկոս:

Տարեկան միջինում Արցախ են այցելում շուրջ 80 երկրների զբոսաշրջիկներ:

Արցախ այցելած զբոսաշրջիկների կողմից ամենաշատ ծախսված գումարը եղել է 2013 թվականին՝ 7200 հազ.դոլար, իսկ ամենափոքրը՝ 2011 թվականին 4100 հազ.դոլար (Գծապատկեր 2):

Զբոսաշրջիկների կողմից Արցախում ծախսված գումարը [9]



2016 թվականին զբոսաշրջությունից ստացված եկամուտները ԱՀ ՀՆԱ-ում կազմել է 1,2 տոկոս:

Նշենք նաև, որ Արցախ այցելողների 86.6 տոկոսը հայկական ծագում ունի: Նրանց շուրջ կեսը Հայաստանի, մեկ քառորդը Ռուսաստանի քաղաքացիներ են: Զբոսաշրջիկների 42.4 տոկոսը Լեռնային Ղարաբաղ է ժամանել՝ հարազատներին և ընկերներին այցելության, 41.3-ը՝ հանգստի ու ժամանցի, և միայն 11.3 տոկոսը՝ գործնական նպատակներով: Մեկ զբոսաշրջիկն Արցախում զիջերել է միջին հաշվով 9 օր՝ ծախսելով շուրջ 66 հազար 500 դրամ:

ԱՀ Շահումյանի շրջանի Քարվաճառով Արցախը Հայաստանին միացնող ռազմավարական ճանապարհի կառուցման ավարտը նոր թափ կհաղորդի Արցախում զբոսաշրջության ոլորտի զարգացմանը: Սակայն Ստեփանակերտի օդանավակայանի վերագործարկման ուշացումը և 2016թ. քառօրյա ապրիլյան պատերազմը որոշակի բացասական ազդեցություն թողեցին ոլորտի առաջնթաց զարգացման վրա: Այնուամենայնիվ, Արցախում տարեցուտարի ընդլայնում է զբոսաշրջիկներին առաջարկով տուրիզմի տեսակները: Արցախի տուրիզմի կարելուր բաղադրիչներն են համարվում՝

- Էթնոտուրիզմը,
- Էկոտուրիզմը,
- մշակութային տուրիզմը,
- արկածախնդրային տուրիզմը:

Տուրիզմի այս տեսակները միշտ գրավիչ են եղել ինչպես երկրագնդի տարբեր վայրերում ապրող հայության համար, այնպես էլ օտաերկրացիների համար:

Մեր պետության համար տուրիզմի զարգացումը գերակա ուղղություն է, և ԱՀ իշխանությունները շարունակելու են ներդրումներ իրականացնել այս ոլորտում ու խրախուսելու են մասնավոր սեկտորի այն ներկայացուցիչներին, որոնք ներդրումներ են իրականացնելու այս բնագավառում:

2015-2016 թվականներին, շնորհիվ զբոսաշրջության ոլորտում տարվող նպատակային պետական քաղաքականության, ինչպես նաև շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության համագործակցության, զբոսաշրջությունը Արցախի Հանրապետությունում արձանագրել է կայուն զարգացում:

Մոնիտորինգի արդյունքում ի հայտ է եկել Հայաստանի Հանրապետությունից Արցախի Հանրապետություն այցելող զբոսաշրջիկների թվաքանակի էական աճ: Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում դեպի Արցախ իրացվել են ավելի քան 1000 զբոսաշրջային փաթեթներ:

Առաջիկա մի քանի տարիներին ԱՀ զբոսաշրջության ոլորտի զարգացման հիմնական նպատակը կհանդիսանա Արցախում արդյունավետ և մրցունակ զբոսաշրջային արդյունքի ստեղծումն ու միջազգային զբոսաշրջային շուկա արտահանումը, որին հասնելու համար անհրաժեշտ կլինի իրականացնել հետևյալ միջոցառումները:

- զբոսաշրջության ոլորտի իրավական դաշտի կատարելագործում՝ ուղղված ոլորտում կազմակերպչական և տնտեսական գործունեության համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը.
- զբոսաշրջային ոլորտի տեղեկատվագովազդային ապահովման համակարգի զարգացում.
- զբոսաշրջության ոլորտում մասնակցություն ցուցահանդեսներին և միջազգային համագործակցության կապերի ստեղծում.
- զբոսաշրջային երթուղիների սահմանում և դրանց ընդգրկում ԱՀ տարածքային համաչափ զարգացման ծրագրերում.
- զբոսաշրջության բնագավառում արդյունավետ մարքեթինգային քաղաքականության մշակում և իրականացում, զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում միջազգային զբոսաշրջային շուկայում.
- հայրենական զբոսաշրջային արդյունքի կայուն որակի և մրցունակության ապահովում.
- փառատոների և այլ հանրային միջոցառումների կազմակերպում:

Իրականացված միջոցառումների արդյունքում կապահովվի զբոսաշրջիկների թվաքանակի կայուն աճ, կերկարացվի զբոսաշրջիկների՝ Արցախում գիշերակացի տևողությունը, ոլորտում կստեղծվեն նոր աշխատատեղեր, կավելանա արտաբերության ներհուսքը հանրապետություն և համապատասխանաբար՝ պետական բյուջե, կարագացվի միջազգային զբոսաշրջային շուկաներում ԱՀ ինտեգրման գործընթացը [8, էջ2]:

Վերոնշյալ միջոցառումների իրականացմանը մեծապես կնպաստի Արցախում ընդունված 2017-2019թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, որի շրջանակներում զբոսաշրջության ոլորտի զարգացմանը տարեկան կուղղվի 20.0 մլն դրամ [6]: Այսպես, 2016թ. ԱՀ զբոսաշրջության զարգացման ուղղությամբ իրականացվել են հետևյալ միջոցառումները (Աղյուսակ 1).

Աղյուսակ 1

**ԱՐՑԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ [8]**

(հազար ՀՀ դրամ)

Հ/Հ	Միջոցառումը	Գումարը
1	Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող միջոցառումներին ԱՀ մասնակցության ծախսեր	1 500,0
2	Զբոսաշրջագրավչության օբյեկտները բազմալեզու տեղեկատվական ցուցանակներով ապահովելու ծրագրի մշակում	1 000,0
3	Զբոսաշրջագրավչության օբյեկտները բազմալեզու տեղեկատվական ցուցանակներով ապահովում	3 700,0
4	Էլեկտրոնային քարտզություն	300,0
5	Քարտզական աշխատանքների իրականացում (միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում, փառատոներում և ֆորումներում մասնակցության ապահովում, տուրիզմի միջազգային օրվա նշում)	9 000,0
6	Փառատոների կազմակերպում	2 000,0
7	Նախորդ տարվա պարտքերի մարում (հրատարակչական աշխատանքների գծով)	2 500,0
Ընդամենը՝		20 000.0

Արցախում իրականացվող այս միջոցառումները կապահովվեն 2017-2019 թվականների համար դեպի մեր հանրապետություն ներգնա զբոսաշրջային այցելությունների կայուն աճը, ինչպես նաև կընդլայնեն ԱՀ այցելող զբոսաշրջիկների ծագման աշխարհագրությունը:

Զբոսաշրջության ոլորտի զարգացման միջոցով կխթանվի Արցախի համայնքներում սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի զարգացումը, կշարունակվի Արցախի Հանրապետությունը ՀՀ զբոսաշրջային երթուղիներում և փաթեթներում ընդգրկելու գործընթացը, կսահմանվեն մրցունակ զբոսաշրջային տարածաշրջաններ, կենտրոններ և զբոսաշրջային երթուղիներ՝ դրանք ընդգրկելով Ճյուղային և տարածքային զարգացման ծրագրերում:

Վերոնշյալ միջոցառումների ծրագրով նաև նախատեսվում է լուծել ոլորտի հետևյալ խնդիրները:

1) զբոսաշրջության ենթակառուցվածքների ձևավորում և զարգացում, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների ստեղծման խթանում,

2) զբոսաշրջության բնագավառում արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացում,

3) ՀՀ զբոսաշրջային շուկային Արցախի ինտեգրում, ակտիվ և արդյունավետ համագործակցության կապերի ստեղծում,

4) սփյուռքի հայկական համայնքների հետ սերտ համագործակցությամբ և արտերկրների պահանջարկի շուկաներում (մասնավորապես, սփյուռքահայերի շրջանակում) տեղեկատվական և քարոզչական աշխատանքների իրականացմամբ Արցախի զբոսաշրջային գործունեության սուբյեկտների համար գործունեության առավել նպաստավոր պայմանների ստեղծում,

5) միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին Արցախի Հանրապետության առավել ներկայանալի մասնակցության ապահովում,

6) զբոսաշրջության ոլորտի մասնաբաժնի ավելացումը երկրի ազգային եկամտի կառուցվածքի ընդհանուր ծավալում:

Առաջիկա տարիների ընթացքում նախատեսվում է Արցախում մշակել զբոսաշրջավայրերի բազմալեզու տեղեկատվական ցուցանակներ, ինչն առավել հասանելի կդարձնի տեղեկատվությունը Արցախի Հանրապետության զբոսաշրջավայրերի, արգելոցների մասին.

Միջոցներ կձեռնարկվեն Արցախի զբոսաշրջային ներուժի մասին մշակված ամբողջ տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային գովազդատեղեկատվական նյութերում և տեղեկատվական բազայում ընդգրկելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Буйленко В.Ф., Туризм. учебник. Ростов-на-Дону, 2008, – Стр. 416.
2. Кусков А.Ц., Джаладян Ю.А. Основы туризма. М., 2008.- Стр. 400.
- 3.«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ԱՀ օրենք՝ ընդունված 2004 թվականի նոյեմբերի 24-ին ՀՕ-147:
4. «ԱՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ԱՀ օրենքը՝ ընդունված 2015 թվականի դեկտեմբերի 23-ին ՀՕ-59-Ն:
5. «ԱՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ԱՀ օրենքը՝ ընդունված 2016 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՕ-36-Ն:
6. ԱՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի «ԱՀ 2017-2019 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 575-Ն որոշում:
7. ԱՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի «2015թ. զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 69-Ա որոշում:
8. ԱՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի «2016թ. զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 92-Ա որոշում:
9. <http://mineconomy.nkr.am> կայքէջ
10. <http://stat.nkr.am> կայքէջ:

РЕЗЮМЕ

Основные тенденции развития сферы туризма в Республике Арцах

Давид Агаджанян

Ключевые слова: международный туризм и туризм НКР, экономика, валовый внутренний и внешний продукты, гостиничное хозяйство, туристические выставки, туристическая индустрия, туристический продукт.

Туризм является одной из специфических сфер социально-экономического развития Арцаха. Следовательно, в последующие годы основной целью развития сферы туризма НКР станет создание эффективного и конкурентоспособного туристического продукта и выход на международный рынок туризма. Посредством развития сферы туризма станет возможным дальнейшее стимулирование и развитие социально-экономической и культурной жизни Арцаха, будет продолжен процесс вовлечения Арцаха в туристические путеводители и пакеты Республики Армения.

SUMMARY

Main Tendencies of Tourism Development in Artsakh

David Aghadjanyan

Key words: International tourism and tourism of the NKR, economy, gross domestic and foreign products, hotel industry, tourist exhibitions, tourism industry, tourist product.

Tourism is one of the specific spheres of socio-economic development of Artsakh. Thus, the creation of an effective, competing product and the entrance to the international tourism market are sure to create the effective and competing tourist product and to secure access to the international market.

Through the development of tourism the further promotion and development of socio-economic and cultural life of Artsakh will be possible. It will also allow to continue the involvement of Artsakh in tourist guides and packages of the Republic of Armenia.